ՄԵԾԱՆՈՒՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ
(Գևորգ Տիրացյանի ծննդյան 85-ամյակի առթիվ)

Լրացավ անվանի հնագետ, պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր Գևորգ Արտաշեսի Տիրացյանի ծննդյան 85-ամյակը: Ծնվել է 1926 թ. սեպտեմբերի 18-ին Ռումինիայի Չետատեա-Ալբա քաղաքում՝ ճանաչված ուսուցիչ և բառարանագիր Արտաշես Տիրացյանի ընտանիքում: Մայրը մեղմ, ազնիվ ու բարեկիրթ հայուհի էր, Դրաստամատ Կանայանի ազգականուհին: Գ. Տիրացյանը, դպրոցական տարիներին ստանալով հիմնավոր կրթություն, 1945 թ. ընդունվում է Բուխարեստի համալսարանի պատմության ֆակուլտետը: Տիրացյանների ընտանիքը հայրենադարձվում է, և 1948 թ. նա դառնում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող: Ավարտելով համալսարանը՝ 1952 թ. ընդունվում է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի նպատակային ասպիրանտուրան, որտեղ նրա գիտական ղեկավարն էր Բորիս Պիոտրովսկին: Ապագա հնագետի աշխարհայացքի և գիտական հետաքրքրությունների ձևավորման հարցում ազդեցություն է ունեցել նաև լենինգրադյան արևելագիտական դպրոցի վառ ներկայացուցիչներից մեկը՝ Կամիլա Տրևերը:



1956 թ. երիտասարդ գիտնականն աշխատանքի է անցնում Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, իսկ արդեն 1957 թ. նրան շնորհվում է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ Գառնիի դամբանադաշտի և բաղնիքի պեղումներով ձեռք բերված տվյալների հետազոտությանը նվիրված ատենախոսության համար: Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ստեղծման առաջին օրերից (1959 թ.) մինչև իր կյանքի վերջը Գ. Տիրացյանն աշխատել է այս ինստիտուտում՝ սկզբում որպես ավագ գիտաշխատող, այնուհետև՝ հին Հայաստանի հնագիտության բաժնի վարիչ (1974–1993 թթ.), ինստիտուտի փոխտնօրեն (1981–1988 թթ.), տնօրեն (1988–1993 թթ.): 1986 թ. նա հաջողությամբ պաշտպանում է դոկտորական ատենախոսություն «Հայաստանը մ. թ. ա. VI – մ. թ. III դարերում» թեմայով, որի համար 1987 թ. նրան շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Ականավոր հնագետի քառասնամյա գիտական բեղմնավոր գործունեությունը գլխավորապես նվիրված էր մեկ հիմնախնդրի՝ հազարամյա ժամանակաշրջան ընդգրկող հին Հայաստանի մշակույթի ուսումնասիրությանը,

որի առհավատյան են նրա պատմագիտական և հնագիտական բարձրամակարդակ ու ինքնատիպ բազում աշխատությունները:

Տակավին երիտասարդ գիտնականը պատմագիտության ասպարեզում կարևոր ներդրում կատարեց իր «Երվանդունիները Հայաստանում» ուսումնասիրությամբ: Այդ աշխատության մեջ, մասնավորապես, ցույց տրվեց, որ ուրարտացիներից հետո Հայկական լեռնաշխարհը վերամիավորելու փորձը կատարվել է Երվանդունիների օրոք, թեև դժվար է պնդել, որ մ. թ. ա. VI–III դարերում Հայաստանում անընդմեջ իշխել է միևնույն հարստությունը: Ավելի քան երկու տասնամյակ անց հրատարակած իր երկու հոդվածներում նա անդրադառնում է Երվանդյան Հայաստանի տարածքին՝ քննարկելով նաև տարածքային փոփոխությունների խնդիրը: Արվում է մի խիստ կարևոր հետևություն. չնայած Դարեհ I-ի օրոք Հայաստանը բաժանվեց երկու սատրապությունների, այնուամենայնիվ, Հայկական լեռնաշխարհը հանդես էր գալիս մի անվան տակ՝ Արմինա՝ որպես ամբողջական մեկ երկիր: Գ. Տիրացյանի պատմագիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել հին հայկական պետության առաջացումը, «Անաբասիսը» և Հայաստանը, Կոմագենե երկիրն ու Հայաստանը և մի շարք այլ կնճռոտ հարցեր, որոնց համակողմանի քննությանը նպաստել են նրա լայնախոհությունը, գիտական հազվագյուտ ինտուիցիան և հին լեզուների իմացությունը (արամեերեն, լատիներեն, հին հունարեն):

*Շատ լայն ու ընդգրկուն էր նաև Գ. Տիրացյանի հնագիտական հետազոտությունների ոլորտը: Այս բնագավառում տաղանդաշատ գիտնականի հատուկ ուշադրության առարկան էին հին Հայաստանի հնագիտության հարցերը: Նա առաջինը փորձեց լուծել հին հայկական մշակույթի պարբերացման հիմնախնդիրը՝ այդ նպատակով օգտագործելով ինչպես հնագիտական աղբյուրների ընձեռած տվյալները, այնպես էլ հմտորեն օգտվելով սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության տեղեկություններից: Առանձնացվեցին հին Հայաստանի մշակույթի զարգացման երեք փուլեր՝ մ. թ. ա. VI–IV, մ. թ. ա. III–I և մ. թ. I–III դարեր: Սկզբնական շրջանում դեռ սակավաթիվ տվյալների հիման վրա առաջարկված պարբերացման այս սանդղակի կիրառման նպատակահարմարությունը շարունակվում էր հաստատվել հնագիտական հետագա բացահայտումների և ուսումնասիրությունների ընթացքում: Տասնամյակների գիտական պրպտումների արդյունքում 1988 թ. լույս տեսավ Գ. Տիրացյանի «*Культура древней Армении, VI в. до н. э. – III в. н. э. (по археологическим данным)*» մենագրությունը: Այս հիմնարար աշխատությունը դարձավ ոչ միայն հնագետների, այլև պատմաբանների, արևելագետների, մշակութաբանների սեղանի գիրքը: Այստեղ ի մի են բերված և համակարգված հին հայկական մշակույթի զարգացման հազարամյա ժամանակահատվածի վերաբերյալ հեղինակի ուսումնասիրությունների հիմնական արդյունքները:*

Գ. Տիրացյանի գիտական աշխատություններում հին հայկական մշակույթի ժամանակագրական ստորին սահմանը համարվում է մ. թ. ա. VI դարը: Նա բազմիցս ցույց է տվել նաև, որ այդ մշակույթի ակունքները շատ ավելի խորն են ու իրենց արմատներով հասնում են երկաթի լայն տարածման և, մինչև իսկ, վաղ երկաթի դարաշրջաններ: Մեծանուն գիտնականի

համոզիչ փաստարկների համաձայն՝ հին հայկական մշակույթում օրգանապես շարունակվում են տեղական նախորդ մշակութային ավանդույթներն այնպիսի կարևոր բնագավառներում, ինչպիսիք են ամրոցաշինությունն ու բնակարանաշինությունը, խեցեգործությունն ու մյուս արհեստները, թաղման ծեսն ու հավատալիքները: Զգալի է Գ. Տիրացյանի ներդրումը բազմաթիվ այլ գիտական խնդիրների լուսաբանման գործում՝ Ուրարտու-Հայաստան, ուրարտական քաղաքակրթությունը և աքեմենյան Իրանը, քաղաքաշինության սկզբունքները հին Հայաստանում, արտաշեսյան սահմանաքարերն ու դրանց արձանագրությունների վերծանումը, Հայաստանի վաղմիջնադարյան մշակույթի ակունքները և այլն:

Գ. Տիրացյանը Կարմիր բլուրի և Գառնիի հնագիտական արշավախմբերի անդամ է եղել, պեղումներ է իրականացրել Հացավանում և այլ հուշարձաններում, հնագիտական հետազոտություններ է կատարել Հայաստանի տարբեր մարզերում, մասնավորապես՝ Աշտարակի ու Նաիրիի տարածաշրջաններում: Սակայն, որպես պրակտիկ հնագետի, նրա աշխատանքների անկյունաքարն են դարձել հին Հայաստանի առաջին մայրաքաղաք Արմավիրի պեղումները, որոնց անփոփոխ ղեկավարն է եղել 1970 թվականից: Արմավիրի և նրա պեղումների վերաբերյալ տաղանդաշատ հետազոտողը հասցրել է հրատարակել շուրջ քառասուն գիտական աշխատություններ: Դրանց շնորհիվ Հին Արմավիրը քաջ հայտնի դարձավ միջազգային գիտական հանրությանը: Գ. Տիրացյանի ջանքերով Արմավիրի արշավախումբը դարձավ հնագիտական կադրերի «կռման դարբնոց», դպրոց՝ բառիս բուն և փոխաբերական իմաստով: Այդ դպրոցն անցած մասնագետներն այսօր էլ հաջողությամբ շարունակում են ականավոր հնագետի թողած գործը թե՛ Արմավիրում, թե՛ Հայաստանի այլ հուշարձաններում:

Գ. Տիրացյանն ակտիվ մասնակցություն էր ունենում միջազգային գիտական կյանքին: Մայրենի լեզվի պես տիրապետում էր գերմաներենին և ռումիներենին, հիմնավորապես գիտեր անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իտալերեն: Լեզուների փայլուն իմացությունը և գիտելիքների մեծ պաշարը նրան հնարավորություն էին ընձեռում զեկուցումներով մասնակցել աշխարհի տարբեր երկրներում անցկացվող հնագիտական ու արևելագիտական կոնֆերանսներին և կոնգրեսներին: Խորհրդային տարիներին միջազգային գիտաժողովներ էին անցկացվում նաև Հայաստանում, որոնց աշխույժ մասնակիցներից ու կազմակերպիչներից էր Գ. Տիրացյանը: Այդ գիտաժողովներից մեկում մի զեկուցող խոսեց իտալերեն: Համաժամանակյա թարգմանություն չէր իրականացվում թարգմանչի բացակայության պատճառով: Երբ վերջացավ սահմանված ժամանակը, և ելույթն ամբողջությամբ ավարտվեց, նիստը նախագահողը հանկարծ խնդրեց առաջին շարքում նստած Գ. Տիրացյանին, որպեսզի նա գոնե մի քանի բառով հաղորդի զեկուցման բովանդակությունը: Վերջինիս համար այդ դիմումն անսպասելի էր, սակայն խնդրանքը չմերժեց և մոտեցավ ամբիոնին: Պետք էր տեսնել գիտաժողովի մասնակիցների հիացմունքը, երբ հայ գիտնականը, շնորհիվ իր ֆենոմենալ հիշողության և մասնագիտական ապշեցուցիչ կարողությունների, ըստ երևույթին, գրեթե ամբողջությամբ թարգմանեց

օտարերկրյա գիտնականի զեկուցումը՝ իր խոսքի համար ծախսելով նույնքան ժամանակ, ինչքան որ տրամադրվել էր զեկուցողին:

Գ. Տիրացյանը գրախոսել է պատմագիտական ու հնագիտական մի շարք մենագրություններ, նրա տաղանդը լավագույնս դրսևորվել է նաև այդ ասպարեզում: Քաջատեղյակ էր իր բնագավառի գիտական շատ թե քիչ կարևոր նորություններին, կարդում էր տարբեր լեզուներով տպագրված աշխատություններ և ժամանակ առ ժամանակ իր պարտքն էր համարում պարզ ու հասկանալի լեզվով քննարկել դրանք: Սրանով, ասես, նա շեշտում էր քննարկվող հարցերի կարևորությունը և հայ մասնագետների ուշադրությունը հրավիրում քննվող մենագրության մեջ արծարծվող խնդիրների վրա: Այս ոլորտում հատկապես դրսևորվում էր Տիրացյան-գիտնականի նրբանկատությունը և հարգանքը՝ իր հեռավոր ու մոտ կոլեգաների գիտական աշխատանքի հանդեպ: Նա հատկապես ուշադիր էր ավագ սերնդի իր գործընկերների նկատմամբ, յուրաքանչյուր առիթով պատրաստ էր իր շնորհակալական խոսքն ասել նրանց և արժեքավորել մեծերի գիտական վաստակը: Այսօր էլ հաճույքով ենք կարդում հոբելյանական առիթներով գիտական հանդեսներում տպագրված Գ. Տիրացյանի փոքր, բայց տարողունակ ու ընդհանրացնող հոդվածները՝ նվիրված գիտության երախտավորներ Կ. Վ. Տրների, Ա. Ա. Սահինյանի, Ս. Տ. Երեմյանի, Բ. Բ. Պիոտրովսկու, Բ. Ն. Առաքելյանի կյանքին և գիտական գործունեությանը:

Կյանքի վերջին տարիներին, ինչպես ասվեց, Գ. Տիրացյանը ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենն էր: Հայագիտական այս կենտրոնը միավորում է գիտության տարբեր ճյուղերի ներկայացուցիչների, և այն ղեկավարելը կապված է որոշակի բարդությունների հետ՝ բոլոր բաժիններին համամասնական ու ներդաշնակ զարգացման հնարավորություն ընձեռելու առումով: Ինստիտուտի փոխտնօրեն Գ. Տիրացյանը հաստատության ղեկավար դարձավ այնքան սահուն, որ այդ փոփոխությունը սկզբում մնաց աննկատելի: Նույն դեմոկրատ անձնավորությունն էր՝ ընդգծված համեստ պահվածքով, պարզ ու հասարակ՝ իր գործընկերների հետ հարաբերություններում: Երբեք չփակվեց իր կաբինետում, միշտ բաժիններում էր, մարդկանց կողքին՝ լսողի դերում: Մտավորական մարդու տիպար էր՝ ազնիվ և արդարամիտ, ղեկավարում էր անաղմուկ ու առանց ցուցադրական հնարքների: Մինչդեռ մեծ ճիգեր էին պահանջվում կենսամակարդակի համընդհանուր անկման պայմաններում ապահովելու գիտական հաստատության նորմալ գործունեությունը: Պետք էր իրագործել համատեղ արշավախմբեր ստեղծելու գաղափարը, որը նորություն էր հայագիտության մեջ: Գ. Տիրացյանի ջանքերով կազմակերպվեցին հայ-ամերիկյան, հայ-բելգիական, հայ-ռուսական հնագիտական արշավախմբերը, որոնց հաջորդելու էին միջազգային համագործակցության նմանատիպ այլ օրինակներ: Ահռելի ճիգեր էին պահանջվում երիտասարդ կադրերի աճեցման գործում, քանի որ անհրաժեշտ նվազագույնի բացակայության պայմաններում երիտասարդ մասնագետները հեռանում էին գիտական հաստատություններից: Այս ամենածանր օրերին Գ. Տիրացյանը փնտրում էր մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ իրականացնել իր

վաղեմի երազանքը. պատրաստել կադրեր, որոնց ձեռք բերած պրոֆեսիոնալ գիտելիքները, ինչպես և հին ու նոր լեզուների իմացությունը թույլ կտային նրանց դուրս գալ իրենց նեղ մասնագիտական շրջանակներից՝ զբաղվելով տարածաշրջանի տարբեր երկրների միջև մշակութային փոխառնչությունների ու միջմյուղային գիտություններին վերաբերող այլնայլ խնդիրների ուսումնասիրությամբ: Այսօրվա հեռավորությունից հնարավոր է ենթադրել, որ Գ. Տիրացյանը միգուցե բարձրաձայն մտածում էր գիտնականի իր տեսակը վերարտադրելու մասին: Իր երազանքն իրականացնելու համար նա պատրաստ էր Երևանի պետական համալսարանի ընդարձակ ու ցուրտ դահլիճներից մեկում, ձմեռնամուտին մասնակցել ուսանողական գիտական նստաշրջանին և վերարկուի մեջ փաթաթված՝ ամփոփել երիտասարդական գիտաժողովի աշխատանքները: Մեզ թվում է, թե դա նրա լավագույն ելույթն էր, ավելի լավը, քան արտասահմանյան տաք ու լուսավոր դահլիճներում ունեցած զեկուցումները, քանի որ դա մեծ գիտնականի վերջին ելույթն էր:

Գ. Տիրացյանը, առհասարակ, սիրում էր երիտասարդների մեջ լինել: Հաճախ կարելի էր նրան տեսնել իր երիտասարդ գործընկերների հետ ոտքով աշխատավայրից (Չարենցի փողոցից) դեպի օպերա գնալիս: Այնտեղից ավտոբուս էր նստում և մի քանի կանգառ բարձրանում Բաղրամյան պողոտայով: Ծառայողական մեքենա ուներ, սակայն աշխատավայր գնալ-գալու համար այդ մեքենայից չէր օգտվում: Կյանքի մարդ էր, հոգով երիտասարդ, դրա համար էլ սիրում էր երիտասարդներին: Բարյացակամ, կիրթ և ազնվական անձնավորություն էր, մինչև ուղն ու ծուծը մտավորական ու քաղաքացի, իսկական երևանցի: Խորհրդային տարիներին, երբ «կապիտալիստական» որևէ երկիր մեկնողն ակամա սկսում էր կարևորել իր անձը, ԱՄՆ-ում կամ Հոլանդիայում կայացած գիտաժողովներից վերադառնալուց հետո էլ նրա կեցվածքը, ինչպես միշտ, պարզ ու բնական էր մնում: Հայ մարդ էր՝ եվրոպացու արտաքինով, խոհուն հայացքով, փոքր-ինչ օրորուն քայլվածքով: Պայծառ ու տաք մարդ էր Գևորգ Տիրացյանը:

Գ. Տիրացյանը մինչ օրս անփոխարինելի «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության առաջին հատորի և «ԽՍՀՄ հնագիտություն» բազմահատորյակի հատորներից մեկի հեղինակներից է: Անժամանակ մահվանից հետո էլ շարունակվում են տպագրվել տակավին անտիպ նրա հոդվածները՝ հայերեն և օտար լեզուներով: Հրատարակվում են նաև մենագրությունները. «Արմավիր»-ը՝ ֆրանսերեն, «Ուրարտուից՝ Հայաստան»-ը՝ անգլերեն: Նշանակում է, որ Գևորգ Տիրացյանն ապրում է ոչ միայն իր հարազատների և աշակերտների սրտերում:

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ